



2

Հեղեղումների հետեւանքները



4

Homo Sapiens-ի մոլորակը



6

Գիրքն ու հոգեւոր զարգացումը



7

Չորքոտանի ու թեւավոր փրկարարները



# ով իրագրեկված է, նա տաշտոյանված է արտակարգ թերթ

N 5 (374)

18.2.2011 - 24.2.2011

www.emergency.am

## ՄԱԿ-ն ԱԻՆ-ի կողքին կլինի իր բոլոր գործակալություններով



ԱԻ նախարար Արմեն Երիցյանն ու ՄԱԿ-ի մշտական համակարգող Դաֆինա Գերչեւան փետրվարի 14-ին ստորագրեցին երկու փաստաթուղթ՝ «Աղետների կառավարման, պատրաստվածության եւ արձագանքման գործողությունների մասին» համաձայնագիր եւ «Հնարավոր աղետների ժամանակ օպերատիվ տեղեկատվության տրամադրման եւ ընդհանուր հաղորդակցության մասին» փոխըմբռնման հուշագիր:

- Ես շատ եմ կարելորում այս փաստաթղթերը, դրանք եւս մեկ քայլ են աղետակայուն երկիր կառուցելու ուղղությամբ: Աղետների ռիսկերի նվազեցումը յուրաքանչյուր երկրի համար առաջնային խնդիր է, ու մենք մեր երկրում ՄԱԿ-ի հետ միասին կարողանում ենք մեր առջեւ դրված խնդիրները հաջողությամբ լուծել, - ասաց Արտակարգ իրա-

վիճակների նախարար Արմեն Երիցյանը:

- 10 տարի է՝ համագործակցում ենք, - նշեց ՄԱԿ-ի մշտական համակարգող Դաֆինա Գերչեւան, - այդ տարիների ընթացքում մենք ձեռքբերումներ ենք ունեցել, բայց միեւնույն ժամանակ դեռ շատ անելիքներ ունենք: Դրա համար էլ մեր շարունակական համագործակցությունը շատ է կարեւորվում եւ՝ Հայաստանի կառավարության, եւ՝ ՄԱԿ-ի կողմից: Մենք ուրախ ենք, որ կարողանում ենք տեղին ու արդյունավետ աջակցություն ցուցաբերել Արտակարգ իրավիճակների նախարարությանը:

Փաստաթղթերում նշվում են այն բոլոր ընթացակարգերը, որոնցով, հնարավոր աղետների դեպքում, կկառավարվի արձագանքումը: Սրանով նաեւ կկանոնակարգվեն աղետի ժամանակ իրավիճակի գնահատումը, տեղեկատվության փոխանակումն ու համակարգումը եւ փոխլրացնող գործողությունները:

Նմանատիպ փաստաթղթերի ու ՄԱԿ-ի հետ համագործակցությունը հատկապես կարեւորվում է նրանով, որ Հայաստանի

պես աղետաշատ երկիրը չի կարող միայնակ դիմակայել եւ արձագանքել խոշոր արտակարգ իրավիճակներին եւ ունի միջազգային օժանդակության կարիք:

ՄԱԿ-ի ու անցյալում Հայաստանի փրկարար ծառայության, իսկ այսօր՝ ԱԻՆ համագործակցությունն ունի տարիների պատմություն: ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի գործունեության շրջանակներում ստեղծվել է աղետների կառավարման թիմ: Այն կոչված է արտակարգ իրավիճակում կազմակերպելու ՄԱԿ-ի կառույցների ու գործընկերների արձագանքումը, համակարգելու մեր երկրին ուղղված միջազգային օգնությունը:

ՄԱԿ-ի ու ԱԻՆ-ի վերջին ամենախոշոր ձեռքբերումն Աղետների ռիսկերի նվազեցման ազգային պլանի միջոցով ձեւավորումն է, որը նախատեսված է Հյուսիսային գործողությունների ծրագրով: Ծրագրին միացած 168 երկրներից միայն 50-ը ունի ազգային պլանի միջոցով, իսկ Հայաստանն այդ առումով միակն է մեր տարածաշրջանում:

- ՄԱԿ-ի կողմից հրավիրված փորձագետները մեր տեղական

մասնագետների հետ միասին կատարեցին մեծ աշխատանք ու համատեղ ուժերով ստեղծեցինք ազգային պլանի միջոցով, որի համար շատ հպարտ եմ, - ասաց ԱԻ նախարար Արմեն Երիցյանը:

Փաստաթղթերը ստորագրելուց հետո ԱԻ նախարար Արմեն Երիցյանը ՄԱԿ-ի մշտական համակարգող Դաֆինա Գերչեւայի հետ շրջեց նախարարության շենքում, ծանոթացրեց նորակառույց դահլիճներին ու շենքի հնարավորություններին: Տիկին Գերչեւան նաեւ տեղեկացավ, որ նոր շենքի կառուցումն արդեն սկսվել է: Շուտով վեր կխոյանա հզոր ու ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած, նոր ճգնաժամային կառավարման կենտրոն, որի կայացման գործում իր խոշոր ներդրումն ունի նաեւ ՄԱԿ-ը: Միջազգային գործընկերոջ օգնությամբ շուտով պատրաստ կլինի աղետների կառավարման ազգային շտեմարանը՝ տվյալների բազան: ՄԱԿ-ը նաեւ աջակցելու է ԱԻՆ-ին նոր կենտրոնի համար փորձագիտական խորհրդատվություն ապահովելու, ծրագրային փաթեթներ եւ տեխնիկա ձեռք բերելու հարցերում:

## Չավարտվող պատմություն

գեղնաթավալ կռուներով, թունավորված լողավազաններով, երգը երգված կարուսելներով եւ այլ վրանգավոր օբյեկտներով

Փետրվարի 9-ին Երեւանի Բուզանդի փողոցում «ՍԼԼ Ինդասթրի» ընկերությանը պատկանող ամբարձիչ աշտարակային կռունկը վայր ընկավ: Մահացավ մեկ մարդ՝ կռունկավար, 65-ամյա Վոլոդյա Կարապետյանը: ԱԻՆ Տեխնիկական անվտանգության կենտրոնը ուսումնասիրելով դեպքը, տվեց փորձագիտական եզրակացություն: Հաստատվեց նախնական վարկածը՝ արգելակման համակարգի անսարքությունը:

- Տեղի է ունեցել անվտանգության նորմերի խախտում, եզրակացության մյուսները պատրաստ են, ուղարկվել են համապատասխան մարմիններին, - պարզաբանում է ԱԻՆ Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի Երեւան քաղաքի փորձագիտական վար-

չության պետ Վլադիմիր Հովսեփյանը, - իրավապահ մարմիններն իրենց մասով գործին շարունակություն կտան: Մեր մասով արվել է հետեւյալը՝ կռունկն ապամոնտաժվել է, տեղափոխվել է: Շինարարական կազմակերպությունը նոր կռունկ պիտի տեղադրի՝ նոր նախագծային փաստաթղթերով, նոր փորձաքննություն պիտի անցկացվի, որից հետո կթուլատրվի շահագործումը:

ԱԻՆ տեխնիկական գոյության փորձագետներն ուսումնասիրել ու պարզել են նաեւ դեպքի բոլոր մանրամասները: Մինչ դժբախտ պատահարը, կռունկը 5 օր չի շահագործվել, որովհետեւ ցուրտ եղանակային պայմանների պատճառով շինարարական աշխատանքները դադարեցվել էին: Փետրվարի 9-ին կռունկավար

Վոլոդյա Կարապետյանը հանձնարարություն է ստացել ներքեւում գտնվող բետոնե շաղախը կռունկով տեղափոխել վերելու: Ականատեսները պատմում են, որ շրջադարձ կատարելու պահին կռունկը տեղաշարժվել է դեպի հետ: Ներքեւից աշխատողները բղավել են ու ազդանշաններ տվել, որ կռունկը կանգնեցնի, սակայն կռունկավարը չի արձագանքել եւ շարունակել է ռելսագծերով առաջ գնալ: Նման դեպքում պիտի որ աշխատեք ծայրային անջատիչը, որը կհոսանքազրկեր կռունկի էլեկտրական շարժիչը: Սակայն անջատիչը չի աշխատել ու կռունկը դուրս է եկել ռելսերից, վայր ընկել:

Բացի նրանից, որ արգելակման համակարգը չի գործել, խախտվել են նաեւ կռունկը շա-



հագործելու անվտանգության կանոնները: Այն 4-5 օր չէր աշխատել, ինչը նշանակում է, որ նախքան նորից գործարկելը պատասխանատու անձը պիտի տեխնիկական զննում անցկացներ ու այդ մասին գրանցում կատարեր հերթափոխային մատյանում:

Այսօր ԱԻՆ Տեխնիկական

անվտանգության ազգային կենտրոնի ռեեստրում որպես արտադրական վտանգավոր օբյեկտ հանրապետության ամբողջ տարածքում գրանցված է 2693 վերամբարձ կռունկ, դրանցից 2010 թվականին կենտրոնում փորձաքննություն են անցել ընդամենը >>> 5



## Երբ փանտերը չի արձագանքում

Փետրվարի 10-ին, ժամը 20.02-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Դավիթաշեն 3-րդ փողոցի թիվ 10 տան բնակիչը չի արձագանքում դռան ու հեռախոսի զանգերին, եւ դուռը բացելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: Դեպքի վայր է մեկնել հատուկ փրկարարական ջոկատի հերթապահ խումբը:

Բացելով նշված տան դուռը՝ փրկարարները ներսում հայտնաբերել են 1931 թ. ծնված Ելիզավետա Մարգարյանի դին:

\*\*\*

Փետրվարի 10-ին, ժամը 21.25-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Արարատյան 1-ին զանգվածի 17-րդ շենքի թիվ 10 բնակարանի բնակիչը չի արձագանքում դռան ու հեռախոսի զանգերին, եւ դուռը բացելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: Դեպքի վայր է մեկնել հատուկ փրկարարական ջոկատի հերթապահ խումբը:

Փրկարարները բացել են նշված բնակարանի դուռը, որտեղ հայտնաբերվել է 1942 թ. ծնված Արտյուշա Չախալյանի դին:

## Թունավորումներ շնու գազից

Լոռու մարզից հայտնել են, որ փետրվարի 9-ին, ժամը 02.00-ի սահմաններում շնու

գազից թունավորումով Ստեփանավանի հիվանդանոց են տեղափոխվել նույն քաղաքի 3. Սեդապարտի փողոցի թիվ 8 շենքի 15-րդ բնակարանի բնակիչներ՝ 1947 թ. ծնված Դասմիկ Խաչատրյանը, 1993 թ. ծնված Մաքսիմ եւ 1994 թ. ծնված Միհրան Դարաջյանները:

Առաջին բուժօգնություն ստանալով՝ տուժածները դուրս գրվել:

\*\*\*

Փետրվարի 9-ին, ժամը 16.42-ին տեղեկություն է ստացվել այն մասին, որ Ստեփանավանի Մ. Գորկու թիվ 14 տան լոգարանում հայտնաբերվել է տանտեր՝ 1936 թ. ծնված Ալբերտ Մելքոնյանի դին:

Նախնական տվյալներով՝ մահվան պատճառ է հանդիսացել է շնու գազից թունավորումը:

\*\*\*

Փետրվարի 12-ին, ժամը 00.20-ին տեղեկություն է ստացվել, որ շնու գազից թունավորումով «Մուրացան» համալսարանական հիվանդանոց է տեղափոխվել Կոտայքի մարզի Քասախ գյուղի բնակչուհի, 2007 թ. ծնված Անժելա Գրիգորյանը:

Բժիշկները երեխայի առողջական վիճակը գնահատել են միջին ծանրությամբ:

\*\*\*

Փետրվարի 11-ին, ժամը 21.50-ին շնու գազից թունավորումով Արմավիր քաղաքի հիվանդանոց են տեղափոխվել նույն քաղաքի Դարբենյաց փողոցի 32-րդ շենքի թիվ 11 բնակարանի բնակիչներ՝ 1994 թ. ծնված Քնարիկ եւ 2000 թ. ծնված Արմին Կարապետյանները:

Բժիշկները տուժածների առողջական վիճակը բավարար են գնահատել:

\*\*\*

Փետրվարի 11-ին Լոռու մարզից ստացված տեղեկության համաձայն՝ ժամը 12.30-ին շնու գազից թունավորումով Ստեփանավանի հիվանդանոց են տեղափոխվել նույն քաղաքի Պրոմեթեոսի փողոցի 11-րդ շենքի թիվ 18 բնակարանի բնակիչներ՝ 1933 թ. ծնված Մկրտիչ Տեր-Մկրտչյանը, 1947 թ. ծնված Անահիտ եւ 1936 թ. ծնված Սվետլանա Աբգարյանները:

Ըստ բժիշկների՝ տուժածների առողջական վիճակը միջին ծանրության է:

## Բախվել է 3 մեքենա

Փետրվարի 13-ին, ժամը 23.22-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Դավթաշեն 43 հասցեում տեղի է ունեցել ավտոպատահար, մեքենաներից մեկում հորեղ եւ բռնկվել, կան տուժածներ եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ եւ հատուկ փրկարարական ջոկատի հերթապահ խումբը:

Դեռու չպարզված համազանցներում բախվել են «Սամանդ» մակնիշի 3457 Տ, «ՎԱԶ 107» մակնիշի 5126 Տ, «Տոյոտա Քեմրի» մակնիշի 41 TD 444 պետհամարանիշներով ավտոմեքենաները:

Պատահարի հետեւանքով՝ 1976 թ. ծնված Արթուր Խաչատրյանը, 1972 թ. ծնված Լեւիկ Առաքելյանը, 1988 թ. ծնված Արա եւ 1959 թ. ծնված Վարդան Դամբարձումյանները ստացել են տարբեր մարմնական վնասվածքներ: Տեղի է ունեցել էլեկտրալարերի կարճ միացում, որը մարվել է տեղի ուժերով:

Փրկարարները տուժածներին դուրս են բերել ավտոմեքենաներից ու հանձնել շտապօգնության բրիգադին, որը տուժածներին տեղափոխել է «Արմենիա» բժշկական կենտրոն:

Բժշկական կենտրոնից հայտնել են, որ ժամը 00.45-ի սահմաններում Լ. Առաքելյանը մահացել է: Մյուս տուժածների առողջական վիճակը բժիշկների գնահատմամբ կայուն ծանր է:

## Մեքենան՝ անդունդի եզրին

Փետրվարի 15-ին, ժամը 16.25-ին Լոռու մարզից ահազանգ է ստացվել, որ Վանաձորի գերեզմանատան տարածքում ավտոմեքենա է դուրս եկել ճանապարհի երթելեկելի հատվածից եւ «կախվել» դեպի ձորը. անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական ջոկատը:

Փրկարարները քարշակման միջոցով ճանապարհի երթելեկելի հատված են դուրս բերել Լոռու մարզի Դարպաս գյուղի բնակիչ Լ.Գալստյանին պատկանող «ՎԱԶ-2121» մակնիշի 03 OS 509 պետհամարանիշով ավտոմեքենան: Զոհեր եւ վիրավորներ չկան:

## Ավտոմեքենաները՝ ձյան գերի

Փետրվարի 13-ին, ժամը 00.25-ին ստացված տեղեկության համաձայն՝ ճնաքի մեջ ավտոմեքենաներ են մնացել եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել Գորիսի հրշեջ-փրկարարական ջոկատը:

Մինչ հրշեջ-փրկարարների դեպքի վայր ժամանելը՝ «Ճանշին»-ի աշխատակիցների կողմից ճնաքից դուրս է բերվել երեք մարդատար ավտոմեքենա, որտեղ գտնվել է 9 մարդ:

Ժամը 04.00-ին տեղեկություն է ստացվել, որ տվյալ ավտոճանապարհով Սիսիան քաղաքի կողմից առկա է ավտոմեքենաների հոսք, որոնք հայտնվում են ճնաքի մեջ եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական ջոկատը:

Մինչեւ ժամը 07.20-ը ճնաքում հայտնված չորս ավտոմեքենաներից փրկարարները դուրս են բերել 8 մարդ, որոնք տեղափոխվել են Գորիս:

\*\*\*

Փետրվարի 14-ին, ժամը 19.58-ին ահազանգ է ստացվել, որ Զորադրյուր-Աբովյան ավտոճանապարհի 1-ին կմ-ում մեքենա է դուրս եկել ճանապարհի երթելեկելի մասից ու խրվել ձյան մեջ, անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր մեկնած մարտական հաշվարկը ճանապարհի երթելեկելի մաս է դուրս բերել «ԲՄՎ» մակնիշի 06 US 512 պետհամարանիշով ավտոմեքենան:

\*\*\*

Փետրվարի 15-ին, ժամը 18.18-ին ահազանգ է ստացվել, որ Վայք-Ջերմուկ ավտոճանապարհի (Կեչուտի ջրամբարի հատված), ավտոմեքենան մխրձվել է ճնապատի մեջ եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր են մեկնել մարզային փրկարարական վարչության փրկարարները եւ Ջերմուկից մեկ մարտական հաշվարկ: Տեղում՝ մոտակայքով անցնող թրթուրավոր տրակտորի օգնությամբ «Կիա Րիո» մակնիշի 955 LO 64 պետհամարանիշով ավտոմեքենան դուրս է բերվել ճնապատից: >>>

# միջազգային լուրեր

## Հեղեղումների հետեւանքները

Բրազիլիայի Ռիո դե Ժանեյրո մահամզում վերջին շրջանում տեղի ունեցած սողանքներից եւ հեղեղումներից զոհվել է 900 մարդ:



Ինչպես հայտնել են տեղական իշխանությունները, միայն Նովա Ֆրիբուրգ քաղաքում մահացածների թիվը հասնում է 426-ի, իսկ հարեւան Տերեզոպոլիս քաղաքում՝ 389-ի: Ներքին գործերի նախարարության տվյալներով՝ 405 մարդ դեռ համարվում է անհետ կորած:

Որոնողական աշխատանքները դեռ շարունակվում են, սակայն մասնագետները համոզված են, որ անհար է մեկ ամիս անց կենդանի մարդ գտնել:

Տուժած շրջաններում պահպանվում է նոր սողանքների սպառնալիքը: Կառավարության տվյալներով՝ տարերքից տուժել է 35 հազար ընտանիք:

## Պապահարներ ծովում

Մոզամբիկի հյուսիսային ափերի մոտ նավ է շրջվել, որն ապօրինի փախստականների էր տեղափոխում Սոմալիից: Պատահարի հետեւանքով զոհվել է 50 մարդ: Նավի վրա 129 փախստական է եղել՝ 89 սոմալիցի եւ 40 եթովպացի: Կենդանի մնացածները տեղափոխվել են փախստականների ճամբար: Մոզամբիկը համարվում է Սոմալիի եւ Եթովպիայի փախստականների նավակայանատեղի: Այդ երկրներից արտագաղթողների երազանքն է հայտնվել Զարավաֆրիկյան Դանաբանությունում, որտեղ կյանքի մակարդակը բարձր է աֆրիկյան մյուս հանրապետություններից:

Անցյալ շաբաթ Վիետնամում խորտակվել է զբոսաշրջային նավ: Միջազգային լրատվամիջոցների հաղորդմամբ՝ զոհվել է առնվազն 12 մարդ: Միջադեպը տեղի է ունեցել երկրի հյուսիսային հատվածում գտնվող Զալոնգ ծովախոցում: Նավի ուղեւորների ընդհանուր թիվը դեռեւս ճշտված չէ, սակայն հայտնի է, որ փրկվել են Վիետնամ

մի 6 քաղաքացի ու 9 օտարերկրացի: Զոհված 12 զբոսաշրջիկների ազգությունը ճշտվում է:

## Խուլերան շարունակում է մոլեգնել

Հայիթիում շարունակում է մոլեգնել խուլերայի համաճարակը: Զոհերի թիվը, ըստ արտասահմանյան աղբյուրների, հասել է 4549-ի: Հիվանդությամբ վարակվածների թիվը հասնում է 231 հազարի, նրանց մեծ մասը տեղափոխվել է հիվանդանոց:



Մայրաքաղաք Պորտ-օ-Պրենսուսում խուլերայից զոհվել է 823 մարդ:

## Հրդեհ օձանելիքի պահեստում

Ռուսաստանի Պերմ քաղաքում տեղի ունեցած հրդեհի զոհերի թիվը հասել է 18-ի:



Հրդեհը տեղի էր ունեցել փետրվարի 10-ի առավոտյան՝ քաղաքի արդյունաբերական գոտում տեղակայված կազմակերպությանը պատկանող օձանելիքի պահեստամասում: Նույն օրը դեպքի վայրում հայտնաբերվել էր ութ դի եւ երկու վիրավոր: Տուժածները ծանր վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց, եւս մի քանիսը հայտարարվել էին անհետ կորած: Բոլոր տուժածները եղել են կազմակերպության աշխատակիցներ:

Կիրակի օրը հայտնի է դարձել տարածքի վարձակալներ հանդիսացող «Կամա Թրեյդ» ընկերության գլխավոր տնօրենի ու նրա տեղակալի ձերբակալության մասին: Նրանց դեմ մեղադրանք է առաջադրված հրդեհային անվտանգության ապահովումը ցածր մակարդակով կազմակերպելու համար, ինչը երկու կան ավելի անձանց մահվան պատճառ է հանդիսացել:

Ֆախնա Թյունիբայան





# արագ արձագանքման ծառայություններ



>>>

Վերադարձի ճանապարհին մարտական հաշվարկը նկատելի է ճնշակույթի մեջ հայտնված «ՎԱԶ-2106» մակնիշի մի ավտոմեքենա, որում գտնվել են վարորդը և մեկ ուղևոր: Քարշակման միջոցով ավտոմեքենան տեղափոխվել է Ջերմուկ:

\*\*\*

Փետրվարի 16-ին, ժամը 00.02-ին ահազանգ է ստացվել, որ Սելիմի լեռնանցքում՝ «Քարվանսարա-յի» ստոր, մեքենա է հայտնվել ճնաքի մեջ և անհրաժեշտ է օգնություն: Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական ջոկատը, որը ճանապարհի երթևեկի հատված է դուրս բերել «ՎԱԶ-2107» մակնիշի 03 SS 063 պետհամարանիշով ավտոմեքենան:

\*\*\*

Փետրվարի 16-ին, ժամը 02.40-ին նման ահազանգ է ստացվել Եղվարդ-Բուժական ավտոճանապարհին ճնաքի մեջ հայտնված մեքենայի վարորդից:

Դեպքի վայր մեկնած մարտական հաշվարկը քարշակման միջոցով Եղվարդ է տեղափոխել «ՎԱԶ-21012» մակնիշի 05 LO 788 պետհամարանիշով ավտոմեքենան, որում գտնվել են վարորդը և մեկ ուղևոր:

\*\*\*

Փետրվարի 16-ին, ժամը 04.30-ի սահմաններում Վայոց ձորի մարզի Գնդեվազ գյուղի մոտակայքում հրշեջ-փրկարարները ձմառային դուրս են բերել «Սուրբուկի» մակնիշի 65 LN 555 և «ՎԱԶ-2106» մակնիշի 68 LU 776 պետհամարանիշներով ավտոմեքենաները:

\*\*\*

Փետրվարի 16-ին, ժամը 07.00-ի սահմաններում Սիսիան-Երեւան ավտոճանապարհի 6-րդ կմ-ում հրշեջ-փրկարարները ձմառային ճանապարհի երթևեկի հատված են դուրս բերել «Օպել-Վեկտրա» մակնիշի 21 LU 617 պետհամարանիշով ավտոմեքենան, որում գտնվել են վարորդը և 4 ուղևոր:

## Պայթույթներ Երեւանում

Փետրվարի 14-ին տեղեկություն է ստացվել, որ ժամը 15.43-ին Երեւանի Փափազյան 29 շենքի թիվ 48 բնակարանում տեղի է ունեցել ինքնաշեն պայթուցիկ սարքի պայթյուն, ինչի հետևանքով տանտեր 53-ամյա Մաթեոս Կոտոյանը տարբեր մարմնական վնասվածքներով տեղափոխվել է Երեւանի թիվ 1 համալսարանական հիվանդանոց:

## Արտակարգ իրավիճակներ ԼՂՀ-ում. 2011 թ., փետրվարի 10-17

Հաղորդում է ԼՂՀ Փրկարար ծառայությունը

### Հրդեհներ

Փետրվարի 11-ին հրդեհ է բռնկվել Սարտակերտ քաղաքի Մ.Մաշտոց փողոցի 58 հասցեում: Հրդեհը մարվել է: Այրվել է ներքնակ և վերնակ: Հրդեհի պատճառ է հանդիսացել հեռախոսալարերի կարճ միակցումը:

Փետրվարի 13-ին հրդեհ է բռնկվել Ստեփանակերտի Աջափնյակ քաղաքում: Հրդեհը մարվել է: Այրվել է 1500 քմ չոր խոտածածկույթ:

Փետրվարի 13-ին հրդեհ է բռնկվել Ասկերանի շրջանի Իվանյան համայնքի մերձակա տարածքում: Դեպքի վայր է մեկնել Ասկերանի շրջանի հրշեջ-փրկարար մասի 1 մարտական հաշվարկ: Հրդեհը մարվել է: Այրվել է մոտ 1 հա չոր խոտածածկ տարածք:

Փետրվարի 14-ին հրդեհ է բռնկվել Ստեփանակերտի Մ.Մաշտոց փողոցի տարածքում («Մենք ենք, մեր սարերը» հուշարձանի մոտ): Դեպքի վայր է մեկնել Ստեփանակերտի հրշեջ-փրկարար մասի 1 մարտական հաշվարկ: Հրդեհը մարվել է: Այրվել է 0,5 հա խոտածածկ տարածք:

### Ձեռք - զինամթերք

Փետրվարի 10-ին Քաշաթաղի շրջանի Կովսական համայնքում հայտնաբերվել է ականանետի

## Ընկել է 9-րդ հարկից

Փետրվարի 15-ին, ժամը 00.40-ին ահազանգ է ստացվել, որ Ավան-Առինջ 2-րդ թաղամասի թիվ 2/5 շենքի 9-րդ հարկից մարդ է վայր ընկել շենքի նախանուղիի բետոնե ծածկի վրա ու մահացել: Դին իջեցնելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել հատուկ փրկարարական ջոկատի հերթապահ խումբը:

Փրկարարները շենքի մուտքի ծածկից իջեցրել են 1954 թ. ծնված Գեղամ Ո.-ի դին:

## «Կիւյան» կամրջից մարդ է նետվել

Փետրվարի 15-ին, ժամը 23.04-ին տեղեկություն է ստացվել, որ Երեւանի «Կիւյան» կամրջից մարդ է նետվել ընկնելով ծառի վրա, և անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել հատուկ փրկարարական ջոկատի հերթապահ խումբը:

ժամը 23.35-ին փրկարարները ծառից իջեցրել են 1978 թ. ծնված Սերգեյ Ա.-ին, որը տեղափոխվել է «Արմենիա» բժշկական կենտրոն: Ըստ բժիշկների՝ նրա առողջական վիճակը ծանր է:

## Շաբաթվա ընթացքում հանրապետության տարածքում արձանագրվել է տարաբնույթ հրդեհների 29 դեպք:

### Հրդեհներ տարածքում

Փետրվարի 11-ին, ժամը 13.20-ին տեղեկություն է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Տավուշի մարզի Կողբ գյուղում:

Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 14.10-ին, մարվել՝ 16.17-ին:

Այրվել են Ա. Աղաբաբյանին պատկանող տան տանիքի փայտյա կառուցատարրերը՝ 83 քմ և միջհարկային փայտյա ծածկը՝ 64 քմ մակերեսով:

\*\*\*

Փետրվարի 13-ին, ժամը 01.12-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Վայոց ձորի մարզի Արփի գյուղում:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 01.53-ին, մարվել՝ 02.10-ին:

Այրվել է Ա. Ավետիսյանին պատկանող տան շքանուղիի տանիքային միջնածածկը՝ 60 քմ և կախովի առաստաղը՝ 30 քմ մակերեսով:

արկ: Ձինամթերքը վնասագերծվել է ՓԾ սակրավորների կողմից:

Փետրվարի 17-ին Շահումյանի շրջանի Նոր Բրաջուր համայնքում հայտնաբերվել է նռնականետի արկ:

### ԵՏՊ

Փետրվարի 13-ին Ասկերանի շրջանի Շոշ գյուղի մոտակայքում «Կիա» մակնիշի 21UL534 պետհամարանիշի ավտոմեքենան, կորցնելով դեկի կառավարումը, դուրս է եկել ճանապարհի երթևեկելի մասից և մոտ 10 մ բարձրությունից գլորվել է ձորը: Պատահարի հետևանքով ուղևորներ, ՀՀ Երեւան քաղաքի բնակիչներ Ջ.Ա.Յովհաննիսյանը (ծնվ. 1989 թ.), Տ.Ա.Ասլանյանը (ծնվ. 1981 թ.) և Ա.Ա.Գաբրիելյանը (ծնվ. 1976 թ.) տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներով և կոտրվածքներով տեղափոխվել են Ստեփանակերտի հանրապետական հիվանդանոց: Ըստ բժիշկների՝ տուժածների կյանքին վտանգ չի սպառնում:

ԼՂՀ փրկարար ծառայության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին

## սեյսմիկ պաշտպանություն

Ա.թ. փետրվարի 10-ից մինչև 16-ը ՄՊԱԾ-ի դիտարկման շայնտանի Հանրապետության տարածքում գրանցել է 3 բալանոց սեյսմիկ ցնցում: Երկրաշարժը տեղի է ունեցել փետրվարի 16-ին, իսկ էպիկենտրոնային գոտին գտնվում է Վեդի քաղաքից 2 կմ հարավ-արևելք:

**Տարածաշրջանում.** 3 բալ և ավելի ուժգնությամբ գրանցվել է 7 երկրաշարժ: 3 բալանոց սեյսմիկ ցնցում է տեղի ունեցել. փետրվարի 10-ին Թուրքիայի Չալդրան քաղաքից 5 կմ հարավ-արևելք, փետրվարի 11-ին Իրանի Սալմաս քաղաքից 17 կմ հարավ-արևմուտք, փետրվարի 15-ին Ադրբեջանում, Քարվաճառ քաղաքից 17 կմ հյուսիս-արևմուտք, և փետրվարի 16-ին Ադրբեջան-Վրաստան սահմանային գոտում, Ադրբեջանի Շեկի քաղաքից 40 կմ արևմուտք: Փետրվարի 13-ին և 14-ին Թուրքիայում տեղի է ունեցել 3-4 բալ ուժգնությամբ երկու երկրաշարժ, Վան քաղաքից, համապատասխանաբար 25 կմ հյուսիս-արևելք և 50 կմ հարավ-արևելք: Փետրվարի 15-ին Վրաստանի Քութայիս քաղաքից 44 կմ հարավ-արևելք տեղի է ունեցել հաջորդ սեյսմիկ իրադարձությունը, որի ուժգնությունն էպիկենտրոնային գոտում կազմել է 4 բալ:

**Տարածաշրջանից դուրս.** 6.0 և ավելի մագնիտուդով տեղի է ունեցել 7 ուժեղ երկրաշարժ: Փետրվարի 10-ին Սուլավեսի ծովում՝ Ֆիլիպինների ավաներն գոտում, գրանցվել է 6.5 մագնիտուդով երկրաշարժ, որին 2 րոպե անց հետևել է 6.7 մագնիտուդով հաջորդ երկրաշարժը (երկրաշարժերի խորությունը 500 կմ-ից ավելի է): Փետրվարի 11-ին Չիլիի ավաներն տարածքում՝ Բիո-Բիո նահանգի Կոնսեպիոն քաղաքից 55 կմ հյուսիս, տեղի է ունեցել երկրաշարժ, որն ունեցել է 6.8 մագնիտուդ: Հաջորդող օրերին գրանցվել է երեք հետցնցում՝ 6.1, 6.0 և 6.6 մագնիտուդներով: Երկրաշարժերի հետևանքով էպիկենտրոնային գոտում ընդհատվել է հեռախոսակապն ու էլեկտրամուցումը, վնասվել է Արգենտինա տանող ճանապարհը, ստորգետնյա ցնցումներն զգացվել են մայրաքաղաք Սանտյագոյում և երկրի կենտրոնական մասում: Փետրվարի 15-ին ինդոնեզական Սուլավեսի կղզու շրջանում տեղի է ունեցել 6.1 մագնիտուդով երկրաշարժ: Բոլոր նշված երկրաշարժերը ցունամի չեն հարուցել:

ԱԻՆ ՄՊԱԾ գործակալություն

## «Էլիտ Գրուպ». կյանքի նոր որակ



Սեյսմակայուն էլիտար շինարարության առաջատարը տարածաշրջանում

E-mail: info@elitegroup.am; URL: www.elitegroup.am

Հակասեյսմիկ համակարգերի միջազգային ասոցիացիայի անդամ «Էլիտ Գրուպ» ընկերությունը տարածաշրջանի առաջատարն է սեյսմակայուն շինարարության ոլորտում:

Առաջին անգամ Հայաստանում «Էլիտ Գրուպի» շենքերում սկսեցին կիրառել ռետինամետաղյա շերտավոր բարձրկներ, որոնցով երկնաքերներ են կառուցում ճապոնիայում, ԱՄՆ-ում, Չինաստանում և այլուր:

«Էլիտ Գրուպ» միակ ընկերությունն է Հայաստանում, որն արժանացել է միջազգային հեղինակավոր վկայականների՝ կառավարման, աշխատանքի պաշտպանության և անվտանգության ոլորտներում:

«Էլիտ Գրուպ» բնակելի, առևտրային, առողջարանային ու հյուրանոցային համալիրներ, ամբողջական թաղամասեր, տարածաշրջանային ծրագրեր, տեղական ու միջազգային հեղինակավոր ու հուսալի գործընկերներ:

Ճիշտ կառավարումը գիտություն է, իսկ «Էլիտ Գրուպ» կառավարվում է գիտնականների կողմից:

Երեւան, Պուշկինի 21, ☎ 56-69-22, 56-69-33:

## եղանակի տեսություն

### Առաջիկա 5 օրվա եղանակի կանխատեսում

Հանրապետության տարածքում փետրվարի 18-ին, 19-ի գիշերը սպասվում է առանց տեղումների եղանակ, 19-ի երեկոյան ժամերին արևմտյան շրջաններում, 20-22-ը՝ ամենուրեք, սպասվում են տեղումներ, լեռնային շրջաններում՝ ձյուն: Քամին՝ 18-ին՝ հյուսիս-արևմտյան 2-7 մ/վրկ, 19-22-ը՝ հարավ-արևմտյան 5-10 մ/վրկ, 19-20-ին՝ առանձին վայրերում ուժգնացում 15-20 մ/վրկ: Օդի ջերմաստիճանը 19-21-ի գիշերներն աստիճանաբար կբարձրանա 10-14, 20-ի գիշերը կնվազի 3-5 աստիճանով: Օդի ջերմաստիճանը փետրվարի 18-ի գիշերը կտատանվի լեռնային շրջաններում՝ -17... -22, Տավուշում՝ -10... -15, Լոռիում՝ -15... -20, Արագածոտնի նախալեռներում՝ -5... -10, Արարատյան դաշտում՝ -5... -8, Սյունիքի հովիտներում՝ -3... -8, Սյունիքի նախալեռներում՝ -9... -14, Արցախում՝ -3... -7 աստիճանի սահմաններում:

Օդի ջերմաստիճանը փետրվարի 18-ի ցերեկը կտատանվի լեռնային շրջաններում՝ 0... -5, Տավուշում՝ +5... +10, Լոռիում՝ -1... +4, Արագածոտնի նախալեռներում՝ +2... +6, Արարատյան դաշտում՝ +4... +8, Սյունիքի հովիտներում՝ +3... +8, Սյունիքի նախալեռներում՝ -1... +4, Արցախում՝ +2... +6 աստիճանի սահմաններում:

**Երեւանում.** 18-ին, 19-ի գիշերը սպասվում է առանց տեղումների եղանակ, 19-ին երեկոյան ժամերին հնարավոր է, 20-22-ը ժամանակ առ ժամանակ սպասվում են տեղումներ: Օդի ջերմաստիճանը փետրվարի 18-ի գիշերը կտատանվի՝ -6... -8, ցերեկը՝ +5... +7 աստիճանի սահմաններում:



Հակահրդեհային հաշվեպլանություն

Փետրվարի 15-ը Արտակարգ իրավիճակների նախարարությունում հաշվեպլանության օր էր՝ անցած տարվա ընթացքում կատարած աշխատանքներն էր ներկայացնում Պետական հրդեհային տեսչությունը:

2010 թ. ընթացքում հանրապետությունում արձանագրվել է հրդեհի 1643 դեպք, որոնց հասցրած վնասը կազմել է ավելի քան 412 միլիոն դրամ: Հրդեհների հետևանքով զոհվել է 21, վնասվածքներ ստացել՝ 40 մարդ: 2009 թ. համեմատ՝ հրդեհների թիվը կրկնակի աճել է:

Վերլուծության համաձայն՝ հրդեհների քանակի զգալի ավելացումը հիմնականում պայմանավորված է կլիմայական անբարենպաստ պայմաններով: Ամռանը դիտված շոգի եւ տեղումների բացակայության պատճառով արձանագրված հրդեհների գերակշիռ մասը տեղի է ունեցել չոր խոտածածկ ունեցող տարածքներում:

Որպես հրդեհների առաջացման հիմնական պատճառներ՝

մասնագետները նշում են.

- կրակի հետ անգոյշ վարմունքը՝ 40.1 %
- երեխաների խաղը կրակի հետ՝ 12.29 %
- էլեկտրական սարքավորումների շահագործման կանոնների խախտումները՝ 12.05 %:



ԱՆ Պետական հրդեհային տեսչությունում հաշվառված է մոտ 36500 օբյեկտ: Անցյալ տարվա ընթացքում իրականացված հրդեհատեխնիկական ստուգում-

ների արդյունքում նախագրված 25-ը, 3 օբյեկտի գործունեությունը դադարեցվել է:

ԱՆ նախարարի հրամանով մոտ 2500 բազմամարդ օբյեկտներում տեսչության աշխատակիցներն անցկացրել են հակահրդեհային քարոզչության միամս-

րածքից հեռացվել են հեղուկ գազի շարժական լցակայանները:

Հրդեհային անվտանգության կանոնները խախտելու կամ չկատարելու համար վարչական պատասխանատվության է ենթարկվել 169 քաղաքացի եւ 731 պաշտոնատար անձ:

Հաշվեպլանում ներկայացնելիս Պետական հրդեհային տեսչության պետ Ավետիք Մկրտչյանն անդրադարձավ նաեւ համակարգի թերացումներին ու խնդիրներին: Դրանք հիմնականում կապված էին հրդեհների հաշվառման, գործավարության ոչ պատշաճ կազմակերպման հետ: Կարգապահական տույժի է ենթարկվել տեսչության տարածքային ստորաբաժանումների 11 աշխատակից: ԱՆ նախարար Արմեն Երիցյանը նշեց, որ տեսչությունում կոռուպցիոն ռիսկերը շատ են, եւ ինքն ամենայն խստությամբ ու հետևողականորեն պայքարելու է դրանց դեմ, որպեսզի հրդեհային տեսչությունը լինի նախարարության հզորագույն եւ ամե-

նամտ հարգանք ունեցող կառույցներից:

Ինձ պետք են մարդիկ, ովքեր կատարում են իրենց պարտքը հայրենիքի առջև, կապ չունի՝ զինվորական, թե քաղաքացի: Յուրաքանչյուրն իր տեղում պետք է այնպես անի, որ այն, ինչ ամռանը կատարվեց Ռուսաստանի Դաշնությունում, Հայաստանում չկրկնվի, - ասաց ԱՆ նախարար Արմեն Երիցյանը:

Տեսչության գլխավոր խնդիրներից մեկը հրդեհային անվտանգության կանոնների կատարմանը հետեւելն է եւ հրդեհների կանխարգելման ուղղությամբ քարոզչության իրականացումը:

Մեր նպատակը ոչ թե մարդկանց, օբյեկտներին պատժելն ու տույժի ենթարկելն է, այլ՝ նրանց մեթոդական օգնություն ցուցաբերելը, հարցի կարեւորությունը բացատրելը, որպեսզի չունենանք մարդկային զոհեր ու նյութական կորուստներ, - հիշեցնում է ԱՆ Պետական հրդեհային տեսչության պետ Ավետիք Մկրտչյանը:

Բարեփոխումներն ԱՆ-ում շարունակվում են

Փորձական ծրագիր՝ Կենտրոնում

Արտակարգ իրավիճակների նախարարությունում մեկնարկում է փորձնական ծրագիր: Այն դեռեւս կկիրառվի Երեւանի կենտրոնում: Իսկ սպասումներն արդարանալու դեպքում՝ նաեւ ամբողջ քաղաքում:

Խորհրդային ժամանակից Երեւանի յուրաքանչյուր շրջանին ժառանգություն էին մնացել մի քանի հրշեջ մասեր, որոնք ունեին իրենց ղեկավարները: Այնուհետեւ շրջաններում ստեղծվեցին փրկարարական վարչություններ՝ որպես առանձին կառույցներ՝ առանձին ղեկավարներով:

Այսօր Արտակարգ իրավիճակ-

ների նախարարությունը ծառայության որակի բարձրացման խնդիր է իր առջեւ դրել: Ցաքուցողի վիճակը վերացնելու, աշխատանքներն ու ծառայությունն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով էլ իրականացվում է պիլոտային ծրագիրը, ըստ որի՝ Երեւանի Կենտրոնի բոլոր հրշեջ մասերն ու փրկարարական բաժինները հավաքվում են մեկ կառույցի տակ՝ մեկ ընդհանուր ղեկավարով:

Փետրվարի 14-ին ԱՆ նախարար Արմեն Երիցյանն այցելեց Երեւանի կենտրոնական հրշեջ մասերից մեկն ու ծանոթացավ այն նոր պայմաններին, որոնք ստեղծ-

վել են նախաձեռնության շրջանակներում:

Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայությունում բարեփոխումներ ենք իրականացնում, - ասաց նախարար Արմեն Երիցյանը, - եթե նպատակահարմար գտնենք, այս փորձնական ծրագիրը հետագայում կկիրառենք Երեւանի բոլոր շրջաններում:

Ըստ ծրագրի՝ ուշադրությունը կենտրոնանում է նաեւ այն համազամանքին, որ այսուհետ հրշեջները ոչ միայն հրշեջ են, այլեւ փրկարար: Այս ուղղությամբ եւս աշխատանքները շարունակվելու են:



Բնապահպանություն



Այս տարի Երկիր մոլորակի բնակիչների թիվը կհասնի պատմական նոր նիշի՝ 7 միլիարդի եւ կշարունակի աճել:

Մենք 9 միլիարդի կիսանքնք այս դարի կեսին: ՄԱԿ-ը մտահոգված է այն հանգամանքով, որ եթե Երկրի բնակչության աճը կարգավորող միջոցառումներ չձեռնարկվեն, ապա 2100 թվա-

Homo Sapiens-ի մոլորակը Ռվ է մրաժեելու մոլորակի մեր անկյունի մասին

կանին մոլորակի վրա կապի արդեն 14 միլիարդ մարդ:

Ի՞նչ է սպասվում մեր մոլորակին: Մարդկությանը հարկավոր կլինեն զգալիորեն ավելի շատ բնական պաշարներ: Եկոհամակարգերի վրա գործադրվող ճնշումը բազմակի կաճի: Տիեզերքի անծայրածիր լայնություններում կորած մեր փոքրիկ օազիսի հողը, ջուրն ու օդը կթունավորեն աղտոտող նյութերի միլիոնավոր տոննաներ: Աղքատությունն ու թշվառությունն առօրյա կդառնան միլիարդավոր մարդկանց համար:

Մարդկանց մեծ մասը կհիմնավորվի քաղաքներում, որոնք բնությունից անջատված կլինեն բետոնե վարագույրով:

Մենք ավելի ու ավելի ենք հեռանում բնությունից, որը հարյուր հազարավոր տարիներ շարունակ մեր օրրանն ու տունն է եղել:

Ահա թե ինչու կենդանի օրգանիզմների վերացող տեսակների ու շրջակա միջավայրում հայտնվող թունավոր նյութերի մասին պատմող սարսափելի թվերը շատերի համար դատարկ հնչյուն են:

Շատ հետաքրքրական տվյալներ է բացահայտում Մեծ Բրիտանիայում անցկացված սոցիոլոգիական հարցումը: 1000 ծնողի ու 500 երեխայի հարցման արդյունքում պարզվել է, որ բրիտանացի երեխաների 25 տոկոսը բակերում չի խաղում: Մեծահասակների 12 տոկոսը բացարձակապես ոչ մի հետաքրքրություն չի ցուցաբերում բնության գրկում հանգստանալու հանդեպ: Ջարմանալի չէ, որ հարցման մասնակցածների 6 տոկոսը կարծում է, թե ելակն աճում է ծառերի վրա, իսկ 5 տոկոսը վստահ է, որ ձմռանը չտերեւաթափվող ծառերը գիշատիչներ են:

Մեծ Բրիտանիայում ծնողների 45 տոկոսն արգելում է երեխաների շփումը բնության հետ անվտանգության նկատառումներից ելնելով, 40 տոկոսը մեղադրում է կյանքի ռիթմին (չափազանց շատ ենք հոգնում շաբաթվա ընթացքում, որպեսզի կարողանանք կիրակի օրերին մոտենալ-հասնել բնությանը):

Մենք պատրաստ ենք զոհաբերելու մեր ֆիզիկական ու հոգեկան, ինչպես նաեւ մեր մոլորակի առողջությունը, հանուն վիրտուալ նյութական հաջողության՝ բետոնապատ ջունգլիներում:

Այսպես մեծանում է մի սերունդ, որն ամբողջովին կտրված է բնությունից: Այդ սերունդը մեր մոլորակի բնությամբ կմտաժողվի... անկեղծորեն, առանց տարատեսակ վարկանիշային ակցիաների...

Մտածելու բան է:



# մասնագետի անկյուն

## Չավարտվող պատմություն

գերնաթավալ կռուներով, թունավորված լողավազաններով, երգը երգված կարուսելներով և այլ վրանգավոր օբյեկտներով

«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքով արտադրական վտանգավոր օբյեկտները, այդ թվում նաև՝ կռուները, պարտադիր պետք է գրանցվեն ռեեստրում ու տարեկան մեկ անգամ անցնեն փորձաքննություն: Միայն այդ կերպ հնարավոր կլինի խուսափել արտակարգ իրավիճակներից:

Հիմնականում կռուների հետ կապված հայտնաբերում ենք հետևյալ թերությունները՝ ռեյսային ուղիների և արգելակման խնդիրներ, ճիշտ տեղադրելու ու ճիշտ շահագործելու հարցում թերացումներ, նախագծային փաստաթղթերի անհամապատասխանություն ստանդարտներին, - ասում է ԱԽՆ Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի Երեւան քաղաքի փորձագիտական վարչության պետ Վլադիմիր Յուսեփյանը:

«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքի համաձայն՝ վտանգավոր օբյեկտ են համարվում ու ռեեստրում գրանցվելու են փորձաքննություն անցնելու ենք ոչ միայն կռուները, այլև՝ հասարակական լողավազանները: Սակայն արտադրական վտանգավոր օբյեկտ է ոչ թե լողավազանը, այլև դրա բաղադրուցի մեկ ուրիշ կարեւոր մասը:

Արտադրական վտանգավոր օբյեկտ է համարվում կոնկրետ քլորակայանը, այն տեղամասը, որտեղ կատարվում է քլորացման գործընթացը, - պարզաբանում է Վլադիմիր Յուսեփյանը:

Յենց քլորակայանի սխալ շահագործման հետեւանքով էլ 2010 թ. դեկտեմբերի 8-ին Երեւանի Դավիթ Յանբարձույանի անվան լողավազանում գրանցվել էր արտակարգ դեպք: Թունավորվել ու հիվանդանոց էին տեղափոխվել 5-14 տարեկան 9 երեխաներ: Բժիշկների շտապ միջամտության շնորհիվ նրանք շատ չտուժեցին: ԱԽՆ տեխնիկական գոյության փորձագետներն այս դեպքը նույնպես ուսումնասիրեցին ու պարզեցին, որ պատճառը շահագործման ու անվտանգության կանոնների խախտումն էր:

Երբ լողավազանը գործում է, եւ այնտեղ մարդիկ կան, պատասխանատու անձն իրավունք չունի միացնել քլորակայանը: Իսկ նա միացրել էր, ինչի արդյունքում տեղի էր ունեցել դժբախտ պատահարը, - բացատրում է Վլադիմիր Յուսեփյանը, - լողավազանների դեպքում հիմնականում խախտվում են անվտանգության կանոնները՝ թե երբ պիտի միացնեն ու անջատեն քլորակայանը, ինչ տիպի անալիտիկ աշխատանքներ պիտի կատարեն: Յաճախ բացակայում են նաև այն անհրաժեշտ սարքավորումները, որոնք պիտի կանխեն արտակարգ պատահարները:

Յետագայում կռուների վայր ընկնելուց, լողավազաններում դժբախտ պատահարներից խուսափելու նպատակով Արտակարգ իրավիճակների նախարարության տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնը կոչ է անում բոլոր արտադրական վտանգավոր օբյեկտներ շահագործողներին անպայման գրանցվել համապատասխան ռեեստրում և անցկացնել փորձաքննություն:

Նախատեսվում է ստեղծել աշխատանքային խմբեր, որոնք նոնները: Փետրվարի 8-ին Քաջարանի Ստեփան Շահունյանի անվան ստորգետնյա հանքում տեղի ունեցած պատահարի հետեւանքով զոհվեց 33-ամյա մեքենավար Արմեն Եղիազարյանը: Նա մնացել էր բեռնատար մեքենայի ու փորվածքի պատի արանքում: ԱԽՆ Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնը արտադրական վտանգավոր օբյեկտում՝ հանքում, ուսումնասիրություն կատարեց ու պարզեց, որ Արմեն Եղիազարյանը եւ բեռնատարի

վարորդ Սասուն Մանասերյանը չեն հետեւել «Մարդկանց եւ հանքի շարժակազմի անվտանգ երթուղիների ընթացակարգին»: Յանքի ղեկավարություն էլ իր հերթին թույլ հսկողություն է իրականացրել ու հանդուրժել անվտանգության ընթացակարգի ոչ պատճառ կատարումը:

Այսուհետ Արտակարգ իրավիճակների նախարարությունը հետեւելու է, որ բոլոր արտադրական վտանգավոր օբյեկտներն ապահով շահագործվեն:



Անվտանգության կանոնների խախտումներով աշխատող օբյեկտների գործունեությունը վերջիվերջո դադարեցվելու է: Յետեւողականության ու արդյունքի հասնելու լավագույն օրինակ է Երեւանում շարժական գազալցակայանների աշխատանքի արգելումն ու դրանց քաղաքից դուրս բերումը: Անցյալ տարի շահագործողներին մի քանի գազալցակայաններից հետո Արտակարգ իրավիճակների նախարարության փորձագիտական-տեսչական խմբերին հա-

ջողվեց վերջնականապես արգելել վտանգավոր կայանների գործունեությունը: Այսօր միայն մեկ-երկու գազի փոքր մեքենա-շարժակայաններ են, որ, ինչպես իրենց է թվում, գաղտնի պայմաններում շարունակում են աշխատել, սակայն ԱԽՆ նախարարությունը արդեն իսկ տեղյակ է եւ շուտով կկասեցնի նաև դրանց գործունեությունը:

Արտակարգ իրավիճակների նախարարության համառ ջանքերի շնորհիվ բարելավվեց նաև զվարճանքի վայրերում գործող կարուսելների տեխնիկական վիճակը: Դրա համար խթան էր անցյալ տարի մայիսի 9-ին Էրզնուրտի գազային պայթյունը: Դրանով վարչությունը, որի պատճառով 4 մարդ վիրավորվել էր: Նախարարության տեխնիկական գոյության մասնագետները ուսումնասիրեցին մայրաքաղաքի բոլոր ատրակցիոնները, որոնք նույնպես համարվում են արտադրական վտանգավոր օբյեկտներ: Կարուսելները չգործեցին այնքան ժամանակ, մինչև չգրանցվեցին ռեեստրում ու չանցան փորձաքննություն:

Արտակարգ իրավիճակների նախարարությունը զգուշացնում է հիշեցնում է, որ օրենքի համաձայն՝ բոլոր արտադրական վտանգավոր օբյեկտները, այդ թվում՝ վերանբարձ կռուներն ու հասարակական լողավազանները պիտի գրանցվեն ռեեստրում և անպայման անցնեն համապատասխան փորձաքննություն: Շահագործողները պետք է հասկանան, որ դա առաջին և երկրորդ աստիճանի շահերից: Գրանցումից ու փորձաքննությունից խուսափողները կտուգանվեն:

## Գենդեր և աղետների ռիսկերի նվազեցում (ԱՌՆ)

Սկիզբը նախորդ համարներում

**Գենդերային հավասարությունն ինքնանպատակ չէ: Այն աղքատության հաղթահարման, կայուն զարգացման և պատշաճ կառավարման խնդիրները լուծելու նախապայման է:**

**Կանանց իրավունքները պաշտպանող միջազգային գործիքներն ու մեխանիզմները**

Կանանց իրավա-հավասարությունը Միավորված ազգերի կազմակերպության հիմնարար սկզբունքներից է: ՄԱԿ-ի Կանոնադրությունը որպես հիմնական նպատակ նշում է՝ «վերահաստատել հավատարմ արդյունքներ, անհատի արժանապատվության և արժեքի, տղամարդու և կնոջ հավասար իրավունքների նկատմամբ»: Կանանց իրավա-հավասարության վերաբերյալ ՄԱԿ-ի Կանոնադրության դրույթներն իրենց գարգացումը գտան մարդու իրավունքների վերաբերյալ բազում միջազգային փաստաթղթերում:

Կանանց դեմ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի Կոնվենցիան (CEDAW) ընդունվել է 1979 թ. և կանանց իրավունքների վերաբերյալ առավել ընդգրկում միջազգային իրավական փաստաթուղթ է համարվում: Կոնվենցիան մատնանշում է բազմաթիվ ոլորտներ, որտեղ կանանց նկատմամբ խտրականությունն առավել ցայտուն դրսևորումներ է ունեցել օրինակ, քաղաքական իրավունքները, ամուսնությունը, ընտանիքը և զբաղվածությունը: Կոնվենցիան սահմանում է հստակ նպատակներ և միջոցներ, որոնց իրագործմամբ կստեղծվի այնպիսի միջազգային հասարակարգ, որտեղ կանայք կօգտվեն տղամարդկանց հետ հավասար իրավունքներից:

2000 թ. դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտավ Կոնվենցիայի ֆակուլտատիվ արձանագրությունը:

Արձանագրությունը պարտավորեց Կանանց դեմ խտրականության վերացման համաձայնագրի ընդունել անհատական կամ խմբակային բողոքներ այն կանանցից, որոնք սպառել են իրենց երկրում դատական կարգով իրենց խնդիրները լուծելու հնարավորությունը: Արձանագրությունը նաև իրավունք է տալիս հանձնաժողովին քննել Կոնվենցիայի դրույթները կոպիտ կամ շարունակական կերպով խախտելու դեպքերը: Այս գործողությունները, սակայն, կարող են իրականացվել միայն Արձանագրությունը վավերացրած պետություններում:

Կանանց քաղաքական իրավունքների մասին ՄԱԿ-ի Կոնվենցիան (1952 թ.) ամրագրում է հասարակության քաղաքական կյանքում տղամարդկանց հետ հավասար կանանց մասնակցության իրավունքը, ներառյալ ընտրովի պաշտոններում ընտրվելու, պաշտոնավարելու և պետական կառավարման գործառնություններ իրականացնելու իրավունքը: Աշխատանքի միջազգային

կազմակերպության (ԱՄԿ) Կոնվենցիաներն ընդգրկում են սոցիալական և աշխատանքային հարցերի լայն շրջանակ, ներառյալ մարդու հիմնական իրավունքները, նվազագույն աշխատավորժը, արտադրական հարաբերությունները, զբաղվածության քաղաքականությունը և սոցիալական երկխոսությունը: Այս հարցերի թվին են պատկանում նաև մի շարք գենդերային բնույթի խնդիրներ:

Յաճախ օգտագործվում է այն փաստարկը, որ կանանց նկատմամբ պաշտպանողական միջոցառումների իրականացումը կարող է բացասաբար անդադարեցնել կանանց կյանքը վրա, գրկելով նրանց որոշակի աշխատանքներ ձեռք բերելու հնարավորությունից: Մայրության հետ կապված արտոնությունները բարձրացնում են կանանց աշխատանքի ընդունելու հետ կապված ծախսերը և, հետևաբար, կարող են հետ պահել գործատուներին կանանց աշխատանքի ընդունելուց: Սակայն մայրության պաշտպանության դեպքում, այս միջոցառումներն անհրաժեշտ են կնոջ վերարտադրողական դերի պաշտպանության առումով: Ահա

թե ինչու Մայրության պաշտպանության մասին վերանայված Կոնվենցիան շեշտադրում է սոցիալական ապահովության միջոցներից մայրության նպաստների վճարման անհրաժեշտությունը և սահմանափակում այն համազանցները, որոնց դեպքում գործատուներն ստիպված են վճարել այդ նպաստներն իրենց սեփական միջոցներից (Կոնվենցիա 183, հոդված 6):

Ստորև բերված է գենդերային հարցերով Կոնվենցիաների ոչ սպառիչ ցանկը.

- Մայրության պաշտպանության մասին Կոնվենցիա
- Կանանց գիշերային աշխատանքի մասին Կոնվենցիա
- Չավարտվող վարձատրության մասին Կոնվենցիա
- Խտրականության (աշխատանքի և զբաղմունքների բնագավառ) մասին Կոնվենցիա
- Ընտանեկան պարտականություններ ունեցող աշխատողների մասին Կոնվենցիա
- Կես դրույթով աշխատանքի մասին Կոնվենցիա
- Տնայնագործ աշխատանքի մասին Կոնվենցիա:

Շարունակելի



## Ընթերցանությունը հոգեւոր աշխարհի զարգացման պայման

«Ես չեմ սիրում կարդալ».  
բազմիցս լսել ենք այս խոսքը մարդկանցից, ովքեր իրենց կյանքի ընթացքում մեկ անգամ գիրք չեն բացել կամ չեն էլ փորձել: Ունանց համար ընթերցանությունը կյանքի անբաժան մասն է, հաճելի մի զբաղմունք, իսկ ունանց համար էլ ծանձրալի է ժամանակի անհիմաստ վատնում: Ենթադրվում է, որ այն մարդիկ, ովքեր կարդալ չեն սիրում, իրականում չեն կարողանում ընդգրկվել սյուժեի մեջ, գայթակղվել մտացածին կամ իրական հերոսներով, վերապրել հերոսների կերպարները եւ այլն: Եկեք փորձենք հասկանալ 2 դեպքն էլ:

Այսօրվա աշխարհում կյանքն այնքան արագ է ընթանում, որ մարդիկ, գերզբաղված լինելով հանդերձ, փորձում են ամեն ինչ հասցնել եւ քայլել ժամանակի պահանջներին համընթաց:

«Որքա՞ն հաճախ եք գրադարան այցելում». այս հարցը զուցե անսովոր եւ տարօրինակ թվա երիտասարդությանը, սակայն վիճակագրական տվյալներով այսօր գրադարան գնացողների եւ ընթերցողների թիվը զգալիորեն քչացել է: Փորձենք հասկանալ պատճառները, որոնք դրդում են փախչել ընթերցանությունից: Շատերն ասում են՝ երբ ձեռքն են վերցնում գիրքը, առաջին տողերը կարդալուց հետո միտքն սկսում է այլ ուղղությամբ աշխատել, չեն կարողանում կենտրոնանալ գրքի նյութի վրա: Այստեղից կարելի է եզրակացնել. եթե մարդու միտքը զբաղված է այլ անհանգստացնող դեպքերով, ապա նա չի կարողանում լիցքաթափվել եւ կարդալ: Սակայն շատերը հավատացնում են, որ հենց ընթերցանությունն է նրանց հիմնական լիցքաթափող եւ հանգստացնող դեղամիջոցը:

Այսինքն՝ ընթերցել սիրելը կախված է մարդու անհատական առանձնահատկություններից: Օրինակ, ընթերցել հատկապես դժվար է հաջողվում տազնապային մարդկանց, քանի որ նրանք սիրում են ամեն ինչ վերահսկողության տակ պահել: Նրանց թվում է, երբ իրենք թերթում են գրքի էջերը, ապա այդ ժամանակ այլ տեղ ինչ-որ վատ կամ ինչ-որ կարեւոր իրադարձություն է տեղի ունենում, որին

մանր: Ինտերնետը մյուս պատճառն է՝ այսօրվա ժամանակին լիովին համահունչ տարբերակ, որը հնարավորություն է տալիս մարդուն գտնելու ամբողջ անհրաժեշտ ինֆորմացիան՝ առանց տնից դուրս գալու եւ ժամանակ ծախսելու: Տարբերակներից է նաեւ հետեւյալը. հոգնած տուն գալով, ավելի հեշտ է միացնել հեռուստացույցը եւ լիցքաթափվել, քան վերցնել գիրքը եւ կարդալ:

տաքերի գործեր կան», «Ես ակտիվ հանգիստն եմ գերադասում» եւ այլն:

Ընթերցանությունը մեծ կապ ունի դաստիարակության, ազգային մտածելակերպի, ազգային առանձնահատկությունների հետ: Եթե տվյալ հասարակությունում ամեն տեղ՝ մետրոյում, սրճարանում, այգիներում մարդիկ կարդում են, ինչպես եվրոպական շատ երկրներում, ապա ընթերցանությունն ընկալվում է իբրեւ շատ կարեւոր եւ անհրաժեշտ մի գործընթաց: Իսկ այն ազգային մտածելակերպում, որտեղ ընթերցանությունը տեղ չունի, ապա դժվար կլինի հասարակությանը համոզել, որ ընթերցանությունը մարդու զարգացման զխավոր պայմաններից մեկն է: Եթե ընտանիքում ծնողները շատ են ընթերցում, եւ երեխան ամեն օր տեսնում է այդ օրինակն իր առջեւ, ապա ընթերցանության նկատմամբ սեր անպայման կլինի: Սերը դեպի ընթերցանություն երեխաների մեջ սերմանելու հիմնական ճանապարհներից է լսել սովորեցնելը: Երեխաները, մինչեւ ինքնուրույն կկարողանան գիրք կարդալ, ամբողջ ինֆորմացիան ընկալում են լսելով: Ուստի ծնողները պետք է սկզբնական շրջանում շատ կարդան նրանց համար:

Բնակչության զգալի մասն ընդհանապես չի ընթերցում, հատկապես վտանգավոր իրավիճակում են գտնվում երեխաները եւ դեռահասները, որոնք շատ քիչ են հետաքրքրված ընթերցանությամբ: Այս հարցը լուրջ մտահոգության առիթ պետք է հանդիսանա ինչպես ծնողների, այնպես էլ պետության համար: Քանի որ պետությունը կարգնում է անգրագետ եւ ոչ ճիշտ արժեքներով մեծացող սերնդի առջեւ, ովքեր դառնալու են ապագա ղեկավարներ: Այսօր մարդկությունը կանգ-

նում է նաեւ մի շատ կարեւոր հարցի՝ մարդու հոգեւոր աշխարհի ոչ զարգացվածության, ոչ բավարարվածության առջեւ, որը կարող է հանգեցնել հոգեբանական եւ հոգեւոր շատ ավելի բարդ խնդիրների:

Բազմիցս հոգեբանների եւ սոցիոլոգների կողմից ապացուցվել է, որ մարդու ինտելեկտի զարգացման հիմնական խթանիչներից է ընթերցանությունը: Ընթերցող մարդիկ ավելի արագ են ընկալում ամբողջական ինֆորմացիան, ավելի արագ են վերլուծում այն, համարժեք են գնահատում իրավիճակը, ճիշտ են օբյեկտիվ որոշումներ են կայացնում, ունեն հիշողության մեծ ծավալ, ունեն ակտիվ երեւակայություն, ավելի ինքնուրույն են, ավելի լավ են ընկալում կապերը երեւոյթների միջեւ եւ այլն: Ընթերցանությունը զարգացնում է մարդու երեւակայությունը, որքան վաղ տարիքից է մարդը կարդում, այնքան ավելի զարգացած է լինում նրա երեւակայությունը, խոսքը, ներքին կերպարներ ստեղծելու կարողությունը, մտքերի «կենդանությունը» ու պատկերավորությունը, ընթերցանությունը զարգացնում է մարդու զգացմունքային եւ հուզական ոլորտը: Որքան վաղ տարիքից է երեխան գիրք կարդում, այնքան նա ավելի վառ է կարողանում պատկերացնել մտացածին իրավիճակն ու կերպարները: Այսինքն՝ ընթերցանությունը զարգացնում է հոգեւոր հասունություն, ձեւավորում է կիրթ եւ սոցիալական արժեքներով տոգորված անձ:

**Աննա Կարապետյան**  
*հոգեբան-խորհրդասու*

**Ձեր հարցերը հոգեբանին կարող եք ուղարկել**  
**hogeban@emergency.am էլ. հասցեով:**



իրենք չեն մասնակցում: Նման մարդկանց անհրաժեշտ է երաշխավորում ունենալ, որ ամեն ինչ մեր աշխարհում նորմալ է ընթանում եւ այն կարելի է որոշ ժամանակ վերահսկողությունից բաց թողնել: Երբ մարդը ներդաշնակ է իր եւ իր ներաշխարհի հետ, ապա նա կարող է առանձնանալ գրքի աշխարհում, ընկղմվել սյուժեի մեջ:

Չընթերցողների թվի մեծացումը պայմանավորված է նաեւ հետեւյալով. այսօր հասարակությունը նախընտրում է ընթերցել թեթեւ, ոչ լուրջ, ոչ խորիմաստ, միտքը չծանրաբեռնող, չհոգնեցնող բովանդակություն ունեցող գրքեր, թերթեր, ամսագրեր, որոնք չեն նպաստում մտքի եւ ինտելեկտի զարգաց-

Ընթերցանությունը կիրառվում է կրթություն ստանալու, սովորելու համար, կյանքում առաջ գնալու եւ լավ աշխատանք թերելու համար: Երիտասարդներն ավելի ու ավելի հազվադեպ են մոտենում գրքին, իսկ երբ մոտենում են, ապա խիստ անհրաժեշտության դեպքում: Մարդը կարող է հաճույք ստանալ ընթերցանությունից, եթե պարտավորված չի ընթերցում, այլ՝ երբ ցանկանում է ու երբ իրեն հաճելի է:

Այսօրվա երիտասարդը հաճույք չի ստանում ընթերցանությունից, բազմիցս են հնչում հետեւյալ խոսքերը. «Չեմ սիրում ընդհանրապես կարդալ, նյարդերս չեն հերիքում», «Ընթերցանությունից զատ ավելի հե-

### Ասույթներ գրքերի մասին

Մարդու ստեղծագործության արժանապատիվներին անհնազանդանալիս եւ ուժարդության արժանին զրհերն են: Գրքերում աղբյուր են անցած ժամանակների մտածումները: Պարզ ու հստակ հնչում են ծայրերը մարդկանց, որոնց աճյուններն էլ վաղուց անկացել են իբրեւ երագ: Այն ամենն, ինչ մարդկությունն իրականացրել է, վերանսծել է, ինչի հասել է, ամբողջն ահա, կարծես կախարդանով, լուսավորվել է գրքերի էջերում:

**Թ. Կառլայլ**

Լույս, առընդմիջ լույս, ամենուր՝ լույս: Լույսի կարիքն ունեն բոլորը: Լույսն անփոփոխված է գրքերում:

**Վ. Յյուզո**

Աբխասանի ֆանի օրեր, ֆանի անհուն գիշերներ, մտքի ուրախ ջանք, ուրախ հույս ու երկյուղ, եռանդուն ներսուզումների ֆանի-ֆանի երկար

կյանքեր են կերպարանք սացել տղազրական այս մանր սառած-սակների մեջ ու խցկվել մեզ օրջատասող գրադարակների նեղիկ սարածի:

**Ա. Սմիթ**

Գրքերը հայելիներ են, եւ եթե դրանց նայում է կադիկը, աղա «դասասխանողը» չի կարող առաջալի դեմքը լինել:

**Գ. Լիխտենբերգ**

Տունը, որտեղ գրքեր չկան, նման է անհոգի մարմնի:

**Յիցերոն**

Գրքերի հետ՝ ճիշտ ինչպես մարդկանց հետ. թեւեւ ցասերին ենք ծանոթանում, սակայն նրանցից միայն մի ֆանիսին ենք ընտրում որդես ընկերներ՝ կյանքի ճանադարի մեծիւ ուղեկիցներ:

**Լ. Ֆոյերբախ**



Կան գրքեր, որոնք լեզու է միայն համեստել, կան այնպիսիք, որոնք ավելի լավ է կուլ տալ, եւ միայն էջերն են արժանի ծանելու եւ մարտնչելու. այլ կերպ ասած, որոշ գրքեր միջի կարդալ միայն մասամբ,

որոններն՝ առանց առանձնահատուկ ջանքի եւ միայն մի ֆանիսն ամբողջությամբ եւ ուժարդությամբ:

**Ֆ. Բեկոն**

Լավ գիրքը նվեր է, որը կսակել է հեղինակը մարդկությանը:

**Դ. Ադիսոն**

Ամենամոռ եւ ամենախիմաշող գիրքն այն գիրքն է, որը դարձադուրս է սիրելիին ճանաչողներին:

**Վովենարո**

Իսկական գիտնականը չի կարող համեստ չլինել. ինչքան ցաս բան է նա արել, այնքան ավելի հստակ է սեսնում, թե դեռ ինչքան ցաս բան է մնացել անելու:

**Ա. Ֆրանս**

Գրքերը, զենքի նման, սիրադեհ են ցաս որոակի ուժի, որդես-գի փրկեն կամ կործանեն:

**Ֆ. Կուպեր**

Մարդկության ամբողջ կյանքը հետեւողականորեն մտնում է սվել գրքում. ցեղերը, մարդիկ, լեզուներն են անհետացել են, իսկ գրքերը մնացել:

**Ա. Գերցեն**





## Ավազներում կորած բանակը

Տասներեքերորդ դարի իսլա-լացի ճանապարհորդ Մարկո Պոլոն, ուղեւորվելով Վենետիկից Պեկին, անապատում մի անսովոր երեւոյթ է դիտարկել, որն այսպես է նկարագրել. «Սակայն այնտեղ ահա թե ինչ հրաշք կա. գնում ես այդ անապատով գիշերը, եւ եթե ինչ-որ մեկը հետ է մնում ընկերներից՝ քնելու կամ այլ գործի համար, եւ հետո փորձում է հասնել նրանց, սկսում է լսել ոգիների խոսակցություններ, ու նրան թվում է, թե ընկերներն են իր անունը տալիս, եւ հաճախ ոգիները նրան հասցնում են այնտեղ, որտեղից նա էլք չի գտնի»:

Բնության այս հետաքրքիր եւ նույնիսկ հանելուկային երեւոյթը գիտնականները հետազայում անվանել են «երգող ավազներ»: Դրանք բնորոշ են շատ անապատների, եւ դա, իրոք, շատ խորհրդավոր ու անսովոր երեւոյթ է. երբ ավազները լանջերից ներքե են սահում, հատկապես չոր տեղերում (այսինքն՝ արեւկող վայրերում), կախարհիչ ու դյուբիչ ձայներ են հանում:

Սակայն ավելի հաճախ անապատները մարդուն բուրբոլի մայր տիպի անակնկալներ են մատուցում, եւ այդ նույն ավազները մեծ ուրբերգության պատճառ կարող են դառնալ: Օրինակ, կարող են մի ակնթարթում ծաղկուն այգին լերկ ու տխուր վայրի վերածել: Ավազի փոթորիկներն սկսվում են անսպասելի ու աննկատ: ...Ներդաշնակորեն զնգզնգացնելով զանգուլակները, որոնք կախված են ուղտերից, քարավանը, կարծես չուզենալով, մի հանգստավայրից մյուսն է տեղափոխվում: Դեռ առավոտ է, բայց արդեն անտառների շոգ, կանգնած օդը՝ կարծես շոշափելի: Գործընկերները հազիվ նկատելի շերտ է երեւում, բայց փորձված քարավանապետն արդեն տեսել է այն եւ անհանգիստ նայում է թեթեւ մթազնած հորիզոնին: Որոշ ժամանակ անց պոտորդեղին ծուխը բռնում է երկնքի կեսը: Ուղտապանները գոռում են ուղտերին մի տեղ հավաքելով: Զագիվ են հասցնում բացել վրանները, երբ բոլորին ծածկում է ավազի փոթորիկը: Միլիոնավոր ավազահատիկներ, անձրեւի նման, թափվում են վրանների վրա, մտրակում մարմնի բաց մասերը՝ մտնելով ծակոտիները:

Անձայրածիր Սահարայում աշխարհի ամենամեծ անապատում, ավազի փոթորիկները հազվադեպ երեւոյթ չեն: Դրանք պատահում են ոչ միայն բուն անապատում, այլեւ հարակից փոքրիկ քաղաքներում, եւ անփորձ մարդուն կարող է թվալ, որ քամին ընդամենը երեխաների բարձրացրած փոշու հետ է խաղում: Բայց մի քանի րոպե չանցած պարզվում է, որ հողն ամենուրեք է «փոշոտվել»: Տպավորություն է ստեղծվում, որ ինչ-որ մի հսկա գորգ է թափ տալիս, եւ ամեն հարվածի հետ փոշին ավելի ու ավելի է շատանում:

Ահա սկսվում են փոշու շրջապտույտները, որոնք հանկարծ միանգամից վեր են թռչում եւ, գետնին զուգահեռ, խոշոր շիթերով առաջ սլանում: Ավազը մտրակում է դեմք ու ձեռք, եւ դժվար է հասկանալ՝ հարվածնե՞րը, թե՞ գերտաքացած ավազահատիկներն են ցած պատճառում: Դեղին «տիղմը» բարձրանում է վեր,

րակատարությունը հետեւակինն էր: Այն կազմված էր համայնքի ազատ անդամներից, չափազանց մարտունակ էր, եւ երկար ժամանակ պարսկական բանակը պարտություն չէր ճաշակել:

Հաղթանակը միդայացիների հանդեպ մտահոգել էր ողջ Հին աշխարհին: Այդ պատճառով էլ փարավոն Ամազիսն առաջարկում էր համայնքի ազատ անդամներից, չափազանց մարտունակ էր, եւ երկար ժամանակ պարսկական բանակը պարտություն չէր ճաշակել:



Եւ օրը ցերեկով մի քանի տասնյակ կավե տնակները մխրձվում են ավազե մշուշի մեջ:

Այդպես եղել է նաեւ մ.թ.ա. 6-րդ դարում, երբ պարսից արքա Կամբիսը Աթենքյանների դիմապատիվ, որոշեց վրձնել Եգիպտացիներից՝ փարավոն Ամազիսի կողմից հորը հասցրած վիրավորանքի համար: Դեռեւս Կյուրոս Մեծի ստեղծած պարսկական բանակն ուժեղ հեծելազոր ուներ, սակայն հատուկ դե-

կում է դաշինք ստեղծել Եգիպտոսի, Լիբիայի եւ Բաբելոնի միջեւ՝ ընդդեմ Պարսկաստանի: Կյուրոսն առանձին-առանձին պարտություն է մատնում Լիբիային ու Բաբելոնին, մնում է միայն Եգիպտոսը: Սակայն այդ գործը մնում է Կյուրոսի որդուն՝ Կամբիսին, որը հայտնի էր իր դաժանությամբ եւ կասկածամտությամբ: Բնավորության այդ գծերը հատկապես վառ էին արտահայտվում Եգիպտացիների ու նրանց աստված-

ների հանդեպ: Կամբիսը մ.թ.ա. 527 թվականին արշավանք է կազմակերպում դեպի Եգիպտոս եւ վերջնում Մեմփիսը: Հաղթանակից հետո նա հրամայում է մահապատժի ենթարկել քաղաքի բոլոր կարկառուն դեմքերին, քանդել տաճարները, մտրակել քրմերին:

Մ.թ.ա. 524 թվականին Կամբիսն ամոնացիների դեմ 50-հազարանոց բանակ է ուղարկում: Չորքերը դուրս են գալիս Թեբեից եւ բարեհաջող հասնում Խարգա օազիսը: Այնտեղից նրանք ուղեւորվում են հյուսիս՝ Ամոնիա, սակայն այդպես էլ տեղ չեն հասնում: Հերոդոտոսի խոսքերով՝ ճանապարհին ավազի ուժեղ փոթորիկ է սկսվում, եւ ամբողջ բանակը կենդանի թաղվում է ավազուտներում:

Աղետի ստույգ տեղը գտնելուն ուղղված աշխատանքներն արդեն շատ տարիներ բազմաթիվ ուսումնասիրողների հանգիստ չեն տալիս: Հատկապես հիմա, երբ գիտությունն առաջ է գնացել: Սակայն ոչ մեկին մինչ օրս չի հաջողվել գտնել Կամբիսի բանակի վերջին հանգրվանը: Գիտնականները վստահ են, որ չոր ավազի մեջ զինվորների սպառազինությունը, որն իրենից մեծ արժեք է ներկայացնում, հիանալի պահպանված կլինի:

Կամբիսի բանակի գաղտնիքը, սակայն, մինչեւ հիմա էլ մնում է չբացահայտված:

Նուրե Գրիգորյան

## Ֆիրկարար

Բազմաթիվ պատմություններ կան այն մասին, թե ինչպես են կենդանիները փրկել մարդու կյանքը: Երբեմն թվում է, թե մեր թեւավոր ու չորքոտանի բարեկամների եւ մարդու միջեւ իսկապես ինչ-որ առեղծվածային, բարեկամական կապ կա՝ անշահախնդիր նվիրվածություն ու հավատարմություն: Քիչ չեն նաեւ դեպքերը, երբ ընտանի կենդանիները, զոհելով իրենց կյանքը, փրկել են տերերին...

դարավում այնքան ժամանակ, մինչեւ տանտիրուհուն չի հանում անկողնուց: Արդեն ինքն էլ զգալով ծխի հոտն ու վայրկյաններ անց տեսնելով կրակի բոցը՝ կինը շտապ արթնացնում է երեխաներին եւ հասցնում դուրս գալ տնից: Նրանց տունն ամբողջությամբ այրվում է: Տան բոլոր բնակիչները փրկվում են, բացի փրկարար կատվից: Կենդանին չի հասցնում դուրս գալ այրվող տնից:

**Օգնության մլավոց**  
Հայտնի է մի այսպիսի դեպք, երբ Գերմանիայում կատուն փրկել է ծնեռային ցուրտ գիշերով փողոցում լքված նորածին երեխայի կյանքը: Կատուն կանգնել էր նորածին մանկան կողքին ու բարձրաձայն մլավում էր այնքան, մինչեւ գրավում է անցորդներից մեկի ուշադրությունը: Փոքրիկին շտապ տեղափոխում են մոտակա հիվանդանոց եւ օգնություն ցույց տալիս: Քանի որ նրա ծնողներին չի հաջողվում գտնել, հետագայում երեխային տեղափոխում են մանկատուն:

**Վտանգի հոտառություն**  
Թոմ Օուենը որոշել էր ընկերոջը պատկանող փոքր մասնավոր ինքնաթիռով թռչել հանգստանալու: Սակայն երբ Թոմն արդեն պատրաստվում էր տնից դուրս գալ, նրա՝ Ջերսի անունով կոկեր-

## Չորքոտանի ու թեւավոր փրկարարները



սպանիել տեսակի շունն ատամներով կաշուն է տիրոջ տաբատից: Սովորաբար խաղաղասեր ու հանդարտ բնավորություն ունեցող շունը սկսում է հաչել ու սպառնալի գռմռալ: Երբ Թոմն, այնուամենայնիվ, փորձում է հեռացնել շանն ու տնից դուրս գալ՝ Ջերսին անսպասելիորեն կծում է նրա ոտքը՝ հարուցելով ողջ ընտանիքի զարմանք ու զայրույթ:

Թոմին արագ հիվանդանոց են հասցնում, իսկ հաջորդ առավոտյան նրանք տեղեկանում են, որ նրա ընկերոջ ինքնաթիռը բախվել է ժայռին, եւ նա մահացել է:

**Վաղ ազդարարում**  
Այս դեպքը տեղի է ունեցել Ռուսաստանում: Թափառական շունը երկրաշարժից փրկում է մի քանի ընտանիքի կյանք, որոնք պարբերաբար շանը կերակրում էին՝ բաժին հանելով իրենց սեղանի մնացորդներից:  
Շունն աղիողորմ ու սրտաճնկի կլանչուն էր նրանց դռների հե-

տևում այնքան ժամանակ, մինչեւ բնակիչները դուրս են գալիս տներից: Մի քանի րոպե անց տեղի է ունենում ուժեղ ցնցում, եւ տների պատերը փուլ են գալիս:

**Անառակ թութակի վերադարձը**  
75-ամյա թոշակառու պապիկը շատ էր սիրում իր Հանգի անունով ավստրալական թութակին: Օրերից մի օր թեւավոր չարածին հաջողում է ու փախչում վանդակից: Տան մոտակայքում մի քանի ժամ սպարոյուն որոնումներից հետո նրա տեղը լիովին կորցնում է հույսը, թե երբեւէ կգտնի իր սիրելի թութակին: Պապիկը նույնիսկ թռչնի վանդակն է սենյակից հեռացնում, որպեսզի նրա մասին հիշողություններն իրեն չտանջեն:  
Սակայն երեկոյան զանգահարում է պապիկի հարեւանուհին եւ հայտնում, որ Հանգին գտնվել է Փախստական թութակին տիրոջը հանձնելով՝ կինն ատում է, որ նրա վերադարձի համար պապիկը պարտական է իր Չառլի անունով կատվին: Պարզվում է, որ կատուն,

չգիտես որտեղ, գտել էր թութակին, հետապնդելով բռնել ու, ատամների մեջ զգույշ պահելով, բերել տուն, եւ, ինչը չափազանց զարմանալի է, միանգամայն առողջ ու անվնաս:

**Սակրավոր կատուն**  
Ռուսաստանի Նովոսիբիրսկ քաղաքում կատուն փրկում է խոշոր գործարարի կյանքը:  
Առավոտյան նրա տեղը սովորականի պես պատրաստվում էր գնալ աշխատանքի, սակայն կատուն պառկել էր ավտոմեքենայի տակ ու ոչ մի կերպ չէր ցանկանում այնտեղից դուրս գալ: Կատվի համառությունն, ի վերջո, իրենց արեց, եւ տեղը ստիպված էր նրա հետեւից մտնել ավտոմեքենայի տակ: Այնտեղ հայացք նետելով՝ տղամարդը նկատում է, որ մեքենայի տակ ինչ-որ կասկածելի փաթեթ է ամրացված: Նա անմիջապես ահազանգում է ոստիկանություն:  
Դեպքի վայր ժամանած սակրավորները հայտնում են, որ դա փեյջերին միացված ռումբ է: Նրանք բարեհաջող ականագերծում են գործարարի ավտոմեքենան եւ վնասազերծում ռումբը:  
Այսպիսով, եթե գործարարի սիրելի կատուն չլիներ, ապա պայթյունն անխուսափելի կլիներ, եւ ընդամենը կես ժամ անց կյանքին հրաժեշտ կտար նաեւ գործարարը:

Պատրաստեց  
Գոհար Բաղդասարյանը





# արտակարգ ժամանց

## Կենդանիների աշխարհում

### Ռազմաշունչ աբլորը՝ մարդասպան

ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգում մարտական աբլորի հար-



ձակման հետեւանքով մի տղամարդ է մահացել:

Դեպքը տեղի է ունեցել աբլորադնների մարտեր կազմակերպող ընդհատակյա գործող սրահներից մեկում: Մարտի մասնակից աբլորներից մեկն անսպասելիորեն հարձակվել է հանդիսատեսի շարքերում կանգնած 35-ամյա Լյուիս Օչոյի վրա:

Ինչպես նշված է ոստիկանության տարածած հաղորդագրության մեջ՝ թռչունը տղամարդուն լուրջ վնասվածքներ էր պատճառել: Գլխի հատվածում ստացած պատռված վերքերը բավական խորն են եղել, եւ տուժածը հիվան-

դանցում մահացել է: Բժշկական եզրակացության համաձայն՝ մահվան պատճառ է հանդիսացել արյան մեծ կորուստը, քանի որ տղամարդն անմիջապես չի դիմել բժշկների օգնությանը: Այլապես՝ նրա կյանքը հնարավոր կլիներ փրկել:

Բանն այն է, որ մարտական աբլորը «մինչեւ ատամները զինված» է եղել: Կռիվն ավելի «տեսարժան» դարձնելու համար աբլորների ոտքերին փոքր դանակներ են ամրացնում, ինչն էլ թռչնի հասցրած վերքերն ավելի վտանգավոր է դարձնում:

### Աղվեսը կրակել է

Մի ամիս առաջ Բելառուսի անտառներից մեկում աղվեսը «կրակել» է որսորդի վրա:

Որսորդը հեռվից դիպուկ կրակոցով վիրավորել է կենդանուն, այնուհետեւ մոտենալով՝ փորձել հրացանի կոթով հարվածել: Սակայն վիրավոր աղվեսը սկսել է կատաղի դիմադրություն ցույց տալ: Պայքարի ընթացքում կենդանին պատահաբար թաքցրել է լիցքավորված հրացանի ծզանին: Հնչել է կրակոց, եւ փափուշտը դիպել է որսորդի ոտքին:

Աղվեսը կարողացել է փախչել, իսկ այ սեփական հրացանի փամփուշտով վիրավորված որսորդն այժմ գտնվում է հիվանդանոցում:

ու կորցնում է գիտակցությունը: Ուշքի գալով՝ նա նկատում է, որ գլխից բացի լրջորեն վնասել է նաեւ ոտքը: Դեյվիդը որոշում է կրկին հեծնել ձիուն՝ հուսալով, որ կենդանին իրեն ինքնուրույն տուն կհասցնի: Սակայն ձիւն նրան ոչ թէ տուն է տանում, այլ՝ ջունգլիներում գտնվող ու կոկորդիլոսներով լի մի ճահիճ: Աղբյուրը բավական ուշ էր: Քանի որ Դեյվիդը շատ արյուն էր կորցրել եւ չէր կարող շարունակ-



### Կատվի ահագանգով

Վերջերս զավեշտալի մի դեպք է գրանցվել ամերիկյան հայտնի արագ արձագանքման «911» ծառայությունում:

Ձիւնջեր անուճով կատուն բնույն է տան հեռախոսի վրա ու, հենվելով սարքի ստեղծաշարին, պատահաբար հավաքում 911 հեռախոսահամարը: Հեռախոսը վերցրած հերթապահը, խոսափողի մյուս կողմից որեւէ ձայն չլսելով, ամեն դեպքում որոշում է այդ հասցեով ոստիկաններ ուղարկել:

Ուշ գիշերով ոստիկանները թակում են նշված հասցեում գտնվող տան դուռը: Քննաթաթախ տանտերը, դուռը բացելով, որեւէ



կերպ չի կարողանում հասկանալ, թե ինչ են իրենից ուզում անհանգստացած ոստիկանները, որոնք հետաքրքրվում են արդյոք ինքն օգնության կարիք չունի: Երկարատեւ բացատրություններից հետո տանտերը նրանց թույլ է տալիս ներս մտնել եւ տեղում համոզվել, որ ինքն անկողնում խաղաղ քնած էր ու որեւէ ծառայություն չի ահագանգել:

Հեռախոսի վրա քնած կատվին հայտնաբերելուց հետո ամեն ինչ պարզ է դառնում թե ոստիկանների, թե տանտիրոջ համար:

### Վեց օր ծառի վրա

Ավստրալիայում մի անասնապահ տղամարդու կոկորդիլոսները ստիպել են վեց օր անցկացնել ծառի վրա:

53-ամյա Դեյվիդ Ջորջը ձիով անցնում էր Ավստրալիայի հյուսիսում գտնվող սակավաբնակ Քուրնիլենդ նահանգով: Հանկարծ ձիւն սայթաքում է: Դեյվիդը ընկնելով, գլուխը հարվածում է գետնին

կել ճանապարհը, նա որոշում է գիշերն այդտեղ անցկացնել: Ապահովության համար նա բարձրանում է ճահիճի մեջտեղում գտնվող հաստաբուն, բարձր ծառի վրա: Առավոտյան նա նկատում է, որ ծառից քիչ հեռու իրեն չափազանց զգոն կերպով հսկում են երկու հսկայական կոկորդիլոս: Ձիւն, ըստ ամենայնի, կարողացել էր կտրել սանձի պարանն ու փախչել, որովհետեւ մոտակայքում արյան ու կենդանու մարմնի մնացորդների հետքեր չկային: Դեյվիդը ստիպված է լինում ամրացնել դիրքերն ու զինվել համբերությանը, քանզի սոված կոկորդիլոսները ծառից մի քայլ չէին հեռանում:

Երբ ձիւն, առանց տիրոջ, վերադառնում է գյուղ, Դեյվիդի բարեկամները ձեռնամուխ են լինում նրա որոնման աշխատանքներին: Երկօրյա անհաջող որոնումներից հետո, նրանք դիմում են փրկարար ծառայության օգնությանը: Սակայն վիրավոր ու քաղցած ֆերմերին հայտնաբերում են միայն վեցերորդ օրվա գիշերը՝ ռազմական ուղղաթիռի օգնությամբ օդից տարվող որոնողական աշխատանքների արդյունքում:

Նրան անմիջապես տեղափոխում են մոտակա հիվանդանոց, կերակրում եւ բժշկական օգնություն ցույց տալիս: Նրա մոտ եղած երկու բուտերբրոդները երկրորդ օրը վերջացել էին, եւ խեղճը քիչ էր մնացել կոկորդիլոսներին կեր դառնալու փոխարեն սոված լինել:

Ոստիկանության ներկայացուցիչ խոսքերով՝ նրա բախտը անասնաբանների էր, քանի որ Դեյվիդը վիրավոր է եղել ու, ամենայն հավանականությամբ, կոկորդիլոսները դա զգալով որոշել են համբերատար սպասել մինչեւ «համեղ պատառն» ինքն իրեն ընկնի իրենց երախը:

Ի դեպ, Դեյվիդին գտնելու պահին «խրախճանքին» սպասող եւ նրա ծառի մոտ պատվո պահակ կանգնած կոկորդիլոսների թիվն արդեն անցնում էր մեկ տասնյակը...

Table with multiple columns and rows containing various symbols and text fragments related to the magazine content.

